Ամսոյս 19-ին Մայր Աթոռի կալուածուն՝ Մաստարա գիւղում՝ ի Տէր հանգեաւ Ներսէս արեղայ Ղազարեան 34 տարեկան հասակում։ Հանգուցեալը իւր երիտասարդութիւնը անցուցել էր Վաստպուրականի Վարագայ ս. Խաչ վանքում և Լիմ անապատում իբրև միաբան, Ս. Սինոդի հրամանով 11-ին յունուարի 1888 թ. ընդունուելով ի հոգևոր միաբանակցութիւն Սևանայ վանից, Օգոստոսի 7-ին կուսակրօն քահանայութեան կոչումն է ստացել գեր. Սարգիս եպիսկոպոս Տէր Վասպուրեանից, 1889 թ. ստանձնել է Մայր Աթոռի սեղանատան տնտեսի պաշտօնը, Հանգուցեալը իւր հեզահամբոյր բնաւորութեամբ և Մայր Աթոռին հաւատարիմ ծառայութեամբ Միաբանութեան վստահութեանն էր արժանացած, քանիցս ստանձնելով վանական կալուածոց առժամանակեայ կառավարութիւնը և տուրքեր ու հարկեր ժողովելու պաշտօնավարութիւնը, որի մէջ և կնքեց իւր մահկանացուն կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Մաղթենք, որ ամենքիս Փրկիչը վաղաթառամ ննջեցեալի հոգին ի լոյս երեսաց իւրոց հանգուցէ և արժանի արասցէ հանդերձեալ երանաւէտ կենացն։